

**ՀՀ Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանի շնորհավորական
ուղերձը բուժաշխատողի օրվա կապակցությամբ**
21.06.2013



Մի րեւի բուժաշխատողներ

Արժևորելով բուժաշխատողի դերն ու նշանակությունը հասարակության մեջ, ի սրտե շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ բուժաշխատողի օրվա առթիվ: Մաղթում եմ առողջություն և հաջողություններ ձեր չափազանց պատասխանատու, մարդասեր և անձնուրաց աշխատանքում:

Բոլոր ժամանակներում հայ բժշկի մարդուն օգնելու պատրաստակամությունը արժանիորեն վայելել է ժողովրդի հարգանքն ու ակնածանքը: Մեր բժիշկները միշտ հավատարիմ մնալով իրենց երդմանը, շատ դեպքերում աշխատելով ծանր պայմաններում, բարեխղճորեն, բարձր պատասխանատվությամբ ու խիստ նվիրումով են կատարել իրենց աշխատանքը:

Հարգելի բժիշկներ, բուժաշխատողներ: Ձեզ վստահված է մարդկային ամենաթանկ արժեքը՝ մեր կյանքը, առողջությունը: Հավատացած եմ, որ միշտ արժանավայել ձևով կկրեք ձեր պատվավոր կոչումը, բարեխիղճ և անձնուրաց կլինեք ձեր գործունեության մեջ:

Կրկին շնորհավորելով ձեզ տոնական օրվա կապակցությամբ, նաև հույս և ցանկություն եմ հայտնում լսել ձեր մարդկային բարձր գնահատանքի, նորանոր նվաճումների, մասնագիտական բարձր վերելքների ու բարձունքների մասին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ` ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ Է.ԲԱՐՍԵՂՅԱՆ